ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶԿՈՄՈՒՄ

Կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի բյուրոն որոշում ընդունեց «XIX համամիութենական կուսակցական կոնֆերանսի առթիվ ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսների պարզաբանման և քննարկման մասին»:

Որոշման մեջ հանձնարարվում է կուսակցության Ստեփանակերտի քաղկոմին, շրջանային կոմիտեներին, սկզբնական կուսակցական կազմակերպություններին սկզբնական արտադրամասային կուսակցական կազմակերպությունների կոմունիստների դռնբաց կուսակցական ժողովներում, կուսխմբերում, աշխատավորական կոլեկտիվներում, հասարակական կազմակերպություններում, մամուլում, հեռուստատեսությամբ և ռադիոյով կազմակերպել XIX համամիութենական կուսակցական կոնֆերանսի առթիվ ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսների պարզաբանումն ու լայն քննարկումը: Կուսակցության մարզկոմի անդամներին և անդամության թեկնածուներին, մարզային կուսակցական կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամներին և կուսակցական ակտիվին պարտավորեցվել է մասնակցել ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսների պարզաբանմանը և քննարկմանը:

Կուսակցության Ստեփանակերտի քաղկոմին, շրջկոմներին, «Սովետական Ղարաբաղ»-«Սովետսկի Կարաբախ» թերթի խմբագրությանը, հեռուստատեսության և ռադիոհաղորդումների մարզային կոմիտեին հանձնարարված է 1988 թվականի հունիսի 7-ին և 17-ին այդ մասին ինֆորմացիա տալ կուսակցության մարզկոմին:

Կուսակցության մարզկոմի կուսակցական- կազմակերպական աշխատանքի, պրոպագանդայի և ագիտացիայի բաժիններին, կուսակցության մարզկոմի մյուս բաժինների և կուսակցության մարզկոմին առընթեր կուսակցական վերահսկողության հանձնաժողովի մասնակցությամբ ապահովել ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսների քննարկման ընթացքում արված առաջարկությունների և դիտողությունների օպերատիվ ամփոփումը և անհրաժեշտ նյութեր նախապատրաստել Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին ինֆորմացիա տալու համար: